# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԿԵՐԽԵՐ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/270 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | KARCHER | KARCHER | KARCHER MC 150 | Kärcher Municipal GmbH | Արտադրման տարեթիվը 2024թ Շարժիչ • Վառելիքի տեսակը - Դիզելային • Շարժիչի հզորություն - 48կՎտ (65 ձ.ու) • Աշխատանքային ծավալ - 2434 սմ³ • Առավելագույն ոլորող մոմենտ - 198 Նմ • Մխոցների քանակը - 4 հատ • Վառելիքի բաքի ծավալ - 60լ • Բնապահպանական ստանդարտ - STAGE V • Սառեցման համակարգ - Ջրային, Ջերմաստիճանի տատանման հիման վրա կառավարվող օդափոխիչով • Հեշտ սպասարկման համար ունի ուղիղ մուտք դեպի շարժիչ և այլ սպասարկում պահանջող կարևոր |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հանգույցներ Քարշակման և ղեկավարման համակարգ • Փոխանցման տուփ - Հիդրոստատիկ • Քարշակման համակարգի տեսակ - Մշտական լիաքարշակ համակարգ • Շասսի - ամբողջությամբ կախովի, ակտիվ հիդրոպնեվմատիկ կախոցով • Տրանսպորտային առավելագույն արագություն - 40 կմ/ժ • Աշխատանքային առավելագույն արագություն - 20կմ/ժ • Հետընթացի առավելագույն արագություն – 12կմ/ժ • Հաղթահարելի առավելագույն թեքություն - 30% • Հաղթահարելի արգելքի առավելագույն բարձրություն - 150մմ • Մեքենայի ընթացքային ղեկավարման համակարգ – 4-անիվային շասսի՝ հիդրավլիկ հոդակապ կառավարման համակարգով • Հիդրավլիկ հոդակապ կառավարման համակարգի առավելագույն թեքման անկյուն - 52 աստիճան • Արգելակման համակարգ - հիդրոստատիկ արգելակ, լրացուցիչ թմբուկային արգելակներով • Մեքենայի ճանապարհային լուսածերպի բարձրություն – |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կարգավորվող՝ կախված մեքենայի արագությունից • Շրջադարձի շառավիղ - 2443մմ • Անիվային բազա - 1707մմ • Միջանիվային հեռավորություն - 1006մմ • Առջևի սռնիի թույլատրելի ծանրաբեռնվածությունը - 2000կգ • Հետևի սռնիի թույլատրելի ծանրաբեռնվածությունը - 2000կգ • Զտաքաշը առանց աքսեսուարների - 2050կգ • Ընդհանուր նորմատիվային(առավելագույն) քաշը - 3500կգ • Մաքսիմալ օգտակար ծանրաբեռնվածություն - 1450կգ • Մեքենայի չափսերը (2 խոզանակային համակարգով և առանց կողային հայելիների) Ե × Լ × Բ – 3981մմ × 1222մմ × 2173մմ Գույնը- սպիտակ,նարնջագույն, մոխրագույն/ համաձայնեցնել պատվիրատուի հետ Վարորդի խցիկ • Վարորդի խցիկ- ROPS սերտիֆիկացված խցիկ • Նստատեղերի քանակը - 2 • Առջևի ապակին տաքացվող • Կողային հայելիները տաքացվող • Խցիկի մուտքը - 2 կողմից • Խցիկը հագեցած է օդորակիչով և տաքացուցիչով • |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Բազմաֆունկցիոնալ էկրանի առկայություն՝ մեքենայի աշխատանքային կարևոր ցուցիչների և տվյալների արտացոլման համար։ • Կարգավորվող կողային հայելիներ • Ղեկի բարձրությունը և թեքությունը՝ կարգավորվող • Խցիկը հագեցած է առջևի ամբարձիչ մեխանիզմը կառավարող ջոյսթիկներով • Մեքենան կահավորված է հետընթացի տեսախցիկով և տեսախցիկի աշխատանքը արտացոլող մոնիտորով/Էկրանով/ Աշխատանքային և գծային հիդրավլիկ համակարգեր • Մեքենաի աշխատանքային և գծային հիդրավլիկ համակարգերը բաղկացած են երկու առանձին կառավարվող բլոկներից։ • Յուրաքանչյուր բլոկի արտադրողականությունը - 37 լ/ր 220 բար։ • Առջևի գծային հիդրավլիկ համակարգը բաղկացած է 4 երկկողմանի գործողության հիդրավլիկ հոսքագծերից • Հետևի գծային հիդրավլիկ համակարգը բաղկացած է 2 երկկողմանի գործողության հիդրավլիկ |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО КЕРХЕР в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/270 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |

հոսքագծերից Էլեկտրական համակարգեր • Մարտկոցի տարողություն - 80 Ամպեր/ժամ • Գեներատորի ելքային հոսանքի ուժ - 90 Ա • Լուսավորության համակարգ - 2 LED լուսարձակ ըստ StVZO ստանդարտների, առկայծող փարոսիկով • Առջևի աշխատանքային լուսավորություն - 2 LED լուսարձակ Ավլող համակարգ • Հատուկ նշանակության մեքենան հագեցած է 2 խոզանակային ավլող համակարգով: • Խոզանակները ունեն անկախ կառավարում • խոզանակները կարող են տեղաշարժվել աջ, ձախ, վերև, ներքև • Խոզանակների ձախ և աջ տեղաշարժը - առանձին • Խոզանակների վերև և ներքև տեղաշարժը - միասին • Խոզանակների արագության կարգավորումը - միասին • Աշխատանքային առավելագույն լայնությունը 2 կողային խոզանակով - 2450մմ • Առջևի 2 ստանդարտ կողային խոզանակների տրամագիծ - 900մմ • 2 խոզանակներն էլ ապահովված են ջրի ներարկման հնարավորությամբ • Մեքենան

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հագեցած է ջրի վերաշրջանառվող համակարգով՝ ավելորդ փոշեգոյացումից խուսափելու համար, ուղիղ ներքաշման համակարգով, ձեռքի ներքաշող խողովակով՝ դժվարամատչելի հատվածներում աշխատելու համար։ • Մաքուր ջրի տարայի ծավալը - 195լ • Վերաշրջանառվող ջրի ծավալը - 150լ • Ձեռքի ներքաշող խողովակի երկարություն – 3200մմ • Ձեռքի ներքաշող խողովակի տրամագիծ - 120մմ • Աղբի տարայի ծավալը - 1500լ • Բեռնաթափման բարձրությունը - 1565մմ • Խոզանակների պտտման առավելագույն արագությունը - 150պտ/ր • Աղբի տարան և ավլող համակարգը(խոզանակները) մեքենայի վրա մոնտաժող և ապամոնտաժող հարմարանք։ Հավելյալ ֆունկցիաներ Ձմռան ամիսներին ձնամաքրման աշխատանքներ կատարելու համար մեքենան ապահովված է՝ 1. Առջևի կենտրոնային համակցմամբ հիդրավլիկ ձնամաքրիչ խոզանակով • Առջևի ձնամաքրիչ խոզանակի աշխատանքային լայնությունը - |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 1500մմ • Տրամագիծը –550մմ • Խոզանակի թեքման անկյուն - 26 աստիճան • Խոզանակի աշխատանքային շարժիչների քանակը - 2 հատ 2. Հետևի հատվածում տեղադրվող աղի և ավազի տարածող/ցանող կոմբինացված սկավառակային և գլանային սարքավորմամբ: • Աղի և ավազի տարածման/ցրման լայնությունը՝ գլանային ցրման ռեժիմում - 1050մմ • Աղի և ավազի տարածման/ցրման լայնությունը՝ սկավառակային ցրման ռեժիմում(կարգավորվող) - 1000մմ-ից 6000մմ • Աղի և ավազի տարայի տարողությունը - 150լ • Վարորդի խցիկից տարածման/ցրման լայնության, ինչպես նաև քանակի և պարբերականության կարգավորման հնարավորություն: 3. Բեռնման ինքնաթափ հարթակով, որը կարող է աշխատել նաև ավազի և աղի տարածող ցանող սարքավորման հետ միասին, որպես աղի և ավազի լրացուցիչ տարա • Բեռնման հարթակի ծավալը – 420լ Հատուկ նշանակության |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | յուրաքանչյուր սարքավորման(մեքենայի) հետ միասին հավելյալ տրամադրվում է ստորև ներկայացված աքսեսուարները. 1. Թվով 1 հատ անիվ իր անվահեծով 2. Թվով 4 հատ ստանդարտ խոզանակ՝ տրամագիծը - 900մմ 3. Թվով 1 հատ հավելյալ առջևի կենտրոնային համակցմամբ հիդրավլիկ ձնամաքրիչ խոզանակ՝ • Առջևի ձնամաքրիչ խոզանակի աշխատանքային լայնությունը - 1500մմ • Տրամագիծը – 550մմ • Խոզանակի թեքման անկյուն - 26 աստիճան • Խոզանակի աշխատանքային շարժիչների քանակը - 2 հատ Մատակարարը իրականացնում է անձնակազմի, վարորդների ուսուցում՝ սարքավորման(մեքենայի) արդյունավետ շահագործման և օգտագործման համար: Մատակարարը ներկայացնում է երաշխիքային կտրոն, որտեղ ներկայացված են երաշխիքային սպասարկման պայմանները: Մատակարարը Երևան քաղաքում ունի պաշտոնական ներկայացուցչություն և |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | պաշտոնական սպասարկման կենտրոն: Երաշխիք 2 տարի / 6000 ժամ Մատակարարը ներկայացնում է մատակարարվող ապրանքների շահագործման և պահպանման պայմանները: Հատուկ նշանակության սարքավորուման(մեքենա) հետ կապված յուրաքանչյուր ի հայտ եկած անսարքության, խափանման դեպքում, պատվիրատուի կողմից մատակարարին տեղեկացնելուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում մատակարարը տրամադրում է գրավոր եզրակացություն՝ հատուկ նշանակության սարքավորուման(մեքենայի) անսարքությունների պատճառների վերաբերյալ: Հատուկ նշանակության սարքավորոման(մեքենա) հետ կապված յուրաքանչյուր ի հայտ եկած անսարքության, խափանման դեպքում, մատակարարի կողմից տրված գրավոր եզրակացությունը պատվիրատուի կողմից հաստատելուց հետո, մատակարարը, առավելագույնը 30 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | օրվա ընթացքում, ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ՝ անսարքությունները, խափանումները վերացնելու համար: Վերոնշյալ անսարքությունը, խափանումը չվերացնելու պարագայում պատվիրատուի կողմից կկիրառվի տույժ յուրաքանչյուր կետանց օրվա համար պայմանագրային արժեքի 0.05%-ի չափով, որը կպահվի պայմանագրի ապահովումից: 1.Ապրանքը պետք է համապատասխանի որակի նկատմամբ պահանջներին, որոնք սահմանվում են տեխնիկական կանոնակարգով, ստանդարտացման ոլորտում փաստաթղթերին, պետական ստանդարտներին, որոնք կիրառվում են այդպիսի ապրանքների համար: 2.Ապրանքը պետք է մինչ այդ շահագործման մեջ եղած չլինի, մինչ այդ ենթարկված չլինի վերանորոգման, նորացման կամ վերականգնման, չպետք է գտնվի գրավի, արգելանքի կամ այլ ծանրաբեռնության տակ: 3.Ապրանքի վրա չպետք է լինեն մեխանիկական վնասվածքների հետքեր, ինչպես նաև |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մատակարարվող Ապրանքի պաշտոնական նկարագրությանն այլ անհամապատասխանություններ: |